

«ՀԱՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հարցի Հնարանը կարգաւորիչը Մինսկի հումբը Պիտի Ըլլայ

«Գարաբաղի հարցի կարգաւորիչը ներկայիս կը շարունակէ մնայ ԵԱՀԽի Մինսկի համաժողովը», երէկ կայացած քորակիցներու հանդիպման ընթացքին յայտարարեց արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուզար Ա. Սաֆարեան անդրադառնալով Փարիզի մէջ շարունակուող Մինսկի խումբի հերթական անկաշտօնի հանդիպման: Նշելով, որ հերթական հանդիպման քննարկման առարկան հակամարտութեան կողմերու միջեւ շտապակցուած ժամանակացոյցի որոշ կէտերու եւ իրեն կցուած յաւելումներէն մէկուն՝ հակամարտութեան գօտիի սահմաններու հարցերն են: Պրն. Սաֆարեան միաժամանակ տեղեկացուց, որ նախօրոք ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն, բանակցութեան կողմերը կը շարունակուին այնքան ժամանակ, մինչեւ որ երկու կողմերը համաձայնին կամ կողմերէն մէկը կտրականապէս հրաժարի բանակցութիւններէն: Անդրադառնալով ներկայիս ընթացող բանակցութիւններու ընթացքին, մամուլի քարտուզարը գտնուեց առայժմ յաջող գնահատեց, կապուած Հայաստանի պատուիրակութեան որոշ առաջարկներու դրական ընթացք տարու հարցով: Այս պարագային երբ ատրպէյհանական կողմը ամէն կերպ կը փորձէ խոչընդոտել բանակցութիւններու յաջող ընթացքը՝ յառաջ էջելով քննարկման շրջանակներուն չ'աւարչուող խնդիրներ: Խօսելով Գարաբաղի հարցի Հայաստանի ներկայ դիրքորոշման մասին ան տեղեկացուց, որ տուեալ դիրքորոշումը հիմնականին մէջ սկզբունքային փոփոխութիւններ չի կրեր: Հայաստանը կը շարունակէ մնայ այն կարծիքին, որ հարցը պէտք է լուծուի խաղաղ բանակցութիւններու ընթացքով, երկրորդ՝ Հայաստանին ընդունելի եւ ձեռնտու է ցանկացած այնպիսի լուծում մը, որ ընդունելի ըլլայ Լեռնային Գարաբաղի իշխանութիւններուն համար: Պատասխանելով այն հարցին, թէ արդեօք այս պարագային հակասութիւն չկայ հարցի լուծման վերաբերեալ Հայաստանի իշխանութիւններու դիրքորոշման եւ ԼՂՀ ՊԳԿ նախագահ Ռ. Քոչարեանի վերջին յայտարարութիւններու միջեւ, որոնց համաձայն հարցը չի կրնար լուծուի ստանալ ԵԱՀԽի սահմաններուն մէջ, պրն. Սաֆարեանը դիտել տուած է, որ այդ հակասութիւնները այնքան ալ զգալի չեն եւ ատուեց կ'երեւին յատկապէս ՄԱԿի վերջին մի քանի նամակներէն: Կարեւորելով խնդրի կարգաւորման գործին նաեւ անմիջական եւ փոխադարձ շփումներու դերը, մամուլի քարտուզարը անոնց համադրական լուծման բանալին համարեց ԵԱՀԽի Մինսկի խումբը:

Գիւմրին կը Մերժէ Սահմանադրական Ցանձնաժողովի Նախագիծը

Գիւմրիի ժողովրդական պատգամաւորներու քայլերու հուրդի հերթական նստաշրջանի կայացած արտահերթ նիստին, որ ավերոջովին նուիրուած էր սահմանադրական յանձնաժողովի եւ 6 կուսակցութիւններու կողմէ առաջարկուած նախագիծերու քննարկման, մասնակցող բոլոր պատգամաւորները, ինչպէս նաեւ քայլերու հուրդի նախագահ բնակատարութեան ենթարկելով յանձնաժողովի առաջարկուած նախագիծը, որոշ վերապահումներով պաշտպանեցին երկրորդը: Երոյթ ունեցողներէն շատեր, նախագահական սահմանադրական նախագիծը բնորոշեցին ՀՀԾի եւ իր կազմակերպական կառոյցներու գաղափարն ու մօտեցումը արտացոլացնող նախագիծ: Նիստի վերջաւորութեան պատգամաւորներու հաւանութեան արժանացաւ առաջարկուած նոր նախագիծ, որ մասնաւորապէս եւ կտրականապէս կը մերժուի սահմանադրական յանձնաժողովի կողմէ առաջարկուած նախագիծը, իսկ երկրորդ կէտով հարց կը յարուցուի Հայաստանի խորհրդարանէն ներս քննարկել ու ընդունիլ 6 կուսակցութիւններու կողմէ պատրաստուած նախագիծը:

ՀՅԽը Հոգատու Չեմք Կ'երկարէ Որբերուն

ՀՅԽի Գործիս վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ քաղաքի եւ շրջանի բոլոր որբերու խնամակարութեան գումարի յանձնման արարողութիւն, որը գուգորդուեցաւ կազմաւորման օրէն ՀՅԽի Գործիս վարչութեան կատարած աշխատանքներու հաշուետուութեամբ: Միջոցառման առիթը Գործիս վարչութեան եւ Իրանի «Հայկին» միութեան միջեւ ստեղծուած բարեկամական կապերն էին, դեռ եւս մի քանի ամիս առաջ այս կապերու շնորհիւ հնարաւոր դարձած էր իրանահայ համայնքի, մասնաւորապէս հայ կանանց միջոցով ստեղծել Գործիս երկկողմանի որբ երեխաներու մշտական խնամակարութեան գործող դրութիւն: Իրանահայ կանանց այս կազմակերպութիւնը, որը ՀՅԽի մասնաճիւղն է, Իրանի մէջ, մինչեւ 18 տարեկանը լրանալը ավերոջովին իր վրայ կը վերցնէ Գործիս որբերու խնամակարութիւնը: Միջոցառման ընթացքին որբերուն կամ իրենց խնամակարներուն յանձնուեցաւ 30 - 40.000 դրամի 2 ամսուայ գումար: ՀՅԽի Գործիս վարչութեան ատենապետուի Զ. Թամրազեանը հանդէս եկաւ հաշուետուութեամբ, ինչպէս «Հայկին» միութեան հետ կապերու ստեղծման նախապատմութեան, այնպէս ալ՝ ընդհանրապէս, իր սկզբնաւորման օրէն ի վեր ՀՅԽի գործիս գործունէութեան մասին: Ցաւալի է, որ միջոցառմանը հրատարակուած քաղաքի հիմնարկ - ձեռնարկութիւններուն տնօրէններէն, տարբեր բարեգործական միջոցառումներու

Հնդկաստանի սահաւոր երկրաշարժի զոհերու թիւը հասնում է կարծուի որ հազարներով մարդիկ ալ թաղուած են հողին տակ: Օտար 1000 բնակիչներով բոլորովին թաղուած է հողին տակ: Օտար թան կը փութան անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

«ՀԱՅՈՒՐ» ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ր Ց Ա Խ

Օգնութիւն Արցախի Ղարոցականներուն

Ղարոցական համայնքապետ, կօշիկ, սրբոյ սակներ, տաք գուլպաներ, այս եւ նոյնքան կարեւոր տրել իրեր ԼՂՀ ժողովրդական կրթութեան, մշակոյթի, գիտութեան եւ մարմնամարզի նախարարութեան աշխատակիցներու կողմէ կեդրոնացած են արցախցի երկրամերու համար: Այս ձեռնարկման նախաձեռնողը հանրապետութեան ներքին գործոց նախարարութիւնն է, որ 2 միլիոն ոտ ըլլի օգնութիւն յատկացուցած է առաջին դասարաններու աշակերտներուն, որոնց ծնողները գոհուած են Արցախի անկախութեան համար սրբօգտութիւն: Ստեփանակերտի եւ Ծուշիկ շրջանի առաջին դասարանի աշակերտներէն բացի, նոյնպիսի օգնութիւն կը ծրարուի յատկացնել Ասկերանի, Մարտակերտի եւ Հաղբու թիւրի յատկացնել Ասկերանի, Մարտակերտի եւ Հաղբու թիւրի շրջաններու աշակերտներուն, որոնք պիտի կազմեն իրանա-բանջիւրին միջին հաշուով 8.5 հազար ոտ ըլլի: Այս օգնութեան շնորհիւ, որոշ չափով պիտի թեթեւանան գոհուած մարտիկներու ընտանիքներուն անհրաժեշտ կարիքները:

Նոր ճիւղեր կը յառաջանան Արցախի համալսարանին մէջ

Լ'նխօցելի ու սու մնական տարու այ սկիզբէն՝ ԼՂՀ համալսարանին մէջ սկսած է գործել մէկ նոր ճիւղ՝ բժշկականաւորանականը: Բացի այդ, կատուցուած քայլին փոփոխութիւններու իրեն արդիւնք՝ նախկին սրտամկան եւ բանասիրական ճիւղերը վերակազմուած են միասնական սրտամարանասիրական եւ իրաւունքի միացեալ ճիւղի մէջ: Ներկայիս այդ ուսումնական հաստատութեան մէջ կարելի է կրթութիւն ստանալ ԼՂՀ համար միանգամայն նոր՝ բժշկի եւ իրաւաբանի մասնապիտակութիւններու գծով: Հաշուի առնելով այսօրուան պահանջները, հոկտեմբեր 15-ն սկստական համալսարանին մէջ կը սկսի գործել նաեւ զինուորական ամպլոն:

Յարաբերական Անդարը

Այս չարթման սկիզբէն ի վեր մինչեւ երէկ հինգշաբթի, ԼՂՀ սպանաճականներուն մէջ կական փոփոխութիւններ տեղի ունեցած չեն: Ինչպէս հարցուած ԼՂՀ սրտամարանութեան բանակի շտաբը, երկու կողմերն ալ ընդհանուր ստանալ կը յարկեն ժամանակաւոր հրազարի վերաբերեալ համաձայնութիւնը: Միայն առանձին որոշ տեղամասերու մէջ արձանագրուած են կարճատեւ փոխ հրազարութեան երեւոյթներ ստանց յիշարժան հետեւ անքներու:

հովանաւորներէն եւ անհատ ձեռներեցներէն կը մասնակցէին շատ քիչեր միայն: Ներկաներուն ուղղուած իր խօսքին մէջ Հ. Յ. Գ. Հայաստանի Կ. Կ. ի ներկայացուցիչ Վ. Եղիազարեանը նշեց, որ ՀՅԽուհիներու նման առաջին նախաձեռնութիւնն է, որը կը վկայէ իրենց գործունէութեան մէջ կարեւոր առաջընթացի մասին: Որբերու խնամակարները իրենց կարգին շնորհակալական խօսք ուղղեցին կազմակերպութեան: Վերջաւորութեան քաղաքի շնորհալի երեխաները հանդէս եկան գրական - գեղարուեստական կատարումներով:

Հարցերը Լուսեցան, Որոշումները Չընդունուեցան

Խորհրդարանի նախորդ տարիներու փորձը կը վկայէ, որ հարցապնդումները, որոնք գործադիր իշխանութեան վրայ խորհրդարանի կողմէ վերահսկողութիւն իրականացրուելու միջոցին պէտք է ծառայեն, իսկութեան մէջ իրենց նպատակին չեն հասնիր: Անոնց պատասխանները պարբերաբար կը ձգձգուին եւ, կրելով ձեւական բնոյթ, չեն ազդեր կամ չեն անդրադառնար գործադիր չ'արմիւններու գործունէութեան վրայ: Բացառութիւն չէին նաեւ երէկ հարցապնդումներուն նուիրուած խորհրդարանական նիստերը, որոնց ընթացքին լուսեցան հանրապետութեան ազգաբնակչութիւնը անհանգստանցնող այնպիսի խնդիրներ, ինչպէս են հացի, երկտրականութեան, ուժանիւթի, մատակարարումներու, փոխադրական աշխատանքներու դժուարութիւնները: Բնակարկուած օրակարգերէն եւ որեւէ մէկուն վերաբերեալ խորհրդարանը ոչ մէկ որոշում չընդունեց: Պատահաւոր ոչ այնքան բուրբ մի բացակայութիւնն էր, որքան վերոյիշեալ հարցերու վերաբերեալ որոշման նախագիծերու բացակայութիւնը: Այսպիսով, խորհրդարանը կրկին անգամ մնաց լսողի դերին մէջ եւ որեւէ որոշում չկայացուց: